

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒ

Տ. Վ. ՍԱՖԱՐՅԱՆ

Հայերենում կան շատ բայեր, որոնց սեռային հատկանիշը միատարր չէ, դրանցում առկա են երկու սեռեր, որոնք առաջացնում են սեռային զուգահեռություններ: Այդ բայերը կոչվում են կրկնասեռ բայեր, իսկ երևույթը՝ կրկնասեռություն: Հայ քերականագիտության մեջ կրկնասեռությունը՝ որպես առանձին քերականական կարգ, ամբողջական և մանրամասն քննության համարյա չի ենթարկվել: լեզվաբանները երևույթի մասին կամ չեն խոսել, կամ հպանցիկ են անդրադարձել այդ հարցին: Ոմանք էլ նկարագրել են կրկնասեռությունը, բայց որպես քերականական կարգ չեն առանձնացրել:

Հ. Բարսեղյանը նկատում է, որ «ոչ միայն կրավորական, այլև ներգործական, չեզոք սեռի բայը կարող է նախադասության մեջ իրեն հակառակ մի այլ սեռի գործածություն ունենալ»¹, բայց դրանք դիտում է որպես «բացառիկ գործածություններ» և չեշտում, որ այդ դեպքում էլ անկախ շարահյուսական կիրառություններից բայերը պահպանում են իրենց սեռը:

Ս. Աբրահամյանը կրկնասեռ է համարում այն բայերը, որոնք դրսևորում են ոչ թե մեկ, այլ երկու սեռային արժեք՝ չկրելով ոչ մի ձևային փոփոխություն: Կրկնասեռությունը բխում է բայիմաստից, և Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, նաև ուրիշներ գտնում են, որ այդպիսի կրկնասեռությունը նախ և առաջ հանդես է գալիս ներգործական և չեզոք սեռի բայերի միջև²: Միաժամանակ նշվում է, որ կրկնասեռությունը հատուկ է նաև կրավորական բայերին, քանի որ «կրավորաձև բայերի մի զգալի մասը առանց ձևային լրացուցիչ փոփոխության կարող է գործածվել թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի արժեքով»³:

Կրկնասեռության երևույթի համեմատաբար խորը և մանրամասն քննություն կատարել է Աշոտ Աբրահամյանը «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ: Նա ևս նշում է, որ կրկնասեռության դրսևորման ժամանակ բայն իր մեջ միևնույն բառաձևի սահմաններում երևան է բերում ոչ թե մեկ, այլ երկու սեռի քերականական առանձնահատկություններ՝ առանց բառաքերականական լրացուցիչ փոփոխությունների: Ա. Աբրահամյանը կրկնասեռությունը սահմանում է հետևյալ կերպ. «Կրկնասեռ են այն բայերը, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ այս կամ այն չափով պարունակում են երկու սեռի՝ ներգործականի և չեզոքի հատկանիշներ»⁴: Առանձնացվում են ներգործական և չեզոք սեռերը, քանի որ դրանց արտահայտումը կախված չէ քերականական բառափոխությունից:

Կրկնասեռությունը կապված է լեզվի պատմական զարգացման հետ, պատմականորեն փոփոխվող կարգ է, տարբեր ժամանակահատվածներում տարբեր

¹ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 131:

² Տե՛ս Ս. Վ. Աբրահամյան, Ն. Ս. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 307:

³ Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 139:

⁴ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Եր., 1962, էջ 703:

դրսերումներ ունի: Այն որոշելիս պետք է հաշվի առնել լեզվի զարգացման սովյալ շրջանը, որովհետև անցյալում որևէ կրկնաստե բայ կարող է կորցնել սեռային հատկանիշներից մեկը՝ հետագայում ներկայանալով իբրև միաստե բայ: Եվ ընդհակառակը, արդի շրջանում կրկնաստեությունը դրսերով բայը կարող է անցյալում միաստե եղած լինել: Լինում են նաև բայեր, որոնց մեջ կրկնաստեությունը անցյալից եկել և պահպանվում է մինչև այժմ:

Առանձնացնելով կրկնաստեության մի քանի դրսերումներ՝ բայիմաստի, խնդրատության, բառակազմական հատկանիշների հետ կապված, միաժամանակ պետք է նշել, որ դրանցից ամենաբնորոշն ու տարածվածը իմաստային կրկնաստեությունն է: Եվ որովհետև այն առավելապես դրսերովում է ներգործական ու չեզոք սեռերի միջև, որոշ լեզվաբաններ հակված են կրկնաստեություն տեսնել միայն այդտեղ, ընդունել միայն կրկնաստեության այս տեսակը՝ շեշտելով, թե կրկնաստե են այն բայերը, որոնք առանց բայիմաստի որևէ փոփոխության ցուցաբերում են երկու սեռային նշանակություն: Երբեմն հենց բայերի իմաստներով են պայմանավորվում սեռային տարբերակումները:

Ստորև բերվող բայերը չեզոք սեռի են, բայց կարող են ուղիղ խնդիր ստանալ և գործածվել ներգործական սեռով:

Շնչել. «Վիրավորը շատ ծանր էր շնչում» - չեզոք: «Եվ ահա թաց ոունգերով շնչում է թարմ արյան հոտը» (ԱԲ, 222) - ներգործական:

Ապրել. «Ամուսինը տարին բոլոր ամստի խորքերում էր ապրում» (ԱԲ, 49) - չեզոք: «Իր կյանքի վերջին օրերն էր ապրում» (ԱԲ, 48) - ներգործական:

Մտածել. «Պապը նստել էր բազմոցին և լուռ մտածում էր»: «Երբ մեր գլուխը ետ հանեցինք, մի վատ, բայց մեր կարծիքով արդար *թշնամություն էինք մտածում»* (ՀՄ, 244):

Բուրել. «Դաշտում անուշ բուրում էին կակաչները»: «Դու *քնքշություն ու սեր էիր բուրում* դեպի Դիլանը» (ՀՄ, 12):

Պետք է նկատել, որ թեպետ գրական հայերենում կրկնաստե բայերը բազմաքանակ չեն, սակայն դրանք խոսակցական լեզվում շատ գործածական են: Պատահական չէ, որ գեղարվեստական գրականության մեջ այդ երևույթին ավելի հաճախ ենք հանդիպում այն գրողների ստեղծագործություններում, որոնց լեզվածին բնորոշ է ժողովրդական բառ ու բանը (Հ. Թումանյան, Ա. Բակունց, Հր. Մաթևոսյան և այլք):

Իսկ ներգործական սեռի բայերը չեզոք սեռի նշանակությամբ գործածվում են հիմնականում այն ժամանակ, երբ դրանք արտահայտում են հաճախակի կրկնվող, սովորություն դարձած գործողություն:

Թմբկահարել. «Իր փչակը թմբկահարում էր մի փայտփորիկ... Հեռու մի տեղ *թմբկահարում էր* փայտփորիկը, շարունակեց երգել ծղրիդը» (ՀՄ, 28-29): Նախադասության առաջին մասում *թմբկահարել* բայը գործածվել է ներգործական սեռի նշանակությամբ, իսկ երկրորդ մասում նույն բայն ունի արդեն չեզոք սեռի կիրառություն:

Լսել. «Երեխաները հետաքրքրությամբ են լսում տատի հեքիաթները»: «Մինչ այդ գլուխը կախ *լսում էր*» (ԱԲ, 44):

Խմել. «Պապիկը խմում էր իր ձեռքով թորած օղին»:

«Իսկ հյուրանոցում խմբապետ Ծավարշը

խմում էր, խմում էր ու մութով լցվում» (2, 126):

Բոլոր այս օրինակներում սեռային տարբերությունների համար հիմք են ծառայում իմաստային նրբերանգներն ու նշանակությունների զանազան առումները, թեպետ բայերը պահպանում են իրենց հիմնական սեռային պատկանելությունը՝ չեզոք կամ ներգործական:

Բայց միշտ չէ, որ իմաստային տարբերություններն առաջացնում են սեռային տարբերություններ, այսինքն՝ տվյալ բայի տարբեր գործածություններում կարող են լինել իմաստային նրբերանգներ, որոնք չեն առաջացնում սեռային տարբերակներ, դրանցում սեռի երկփեղկում չի լինում: Օրինակ՝ *արտահայտել, ապականել, բերել, դատարկել, թողնել, ժխտել, ծայել, կծել, հայտարարել* և այլ բայեր միայն ներգործական սեռի են, իսկ *ավելանալ, բուսնել, ժպտալ, վազել, ընկնել, գնալ, դժվարանալ, խենթանալ, ծիծաղել, հիանալ* և այլ բայեր չեզոք սեռի են իրենց բոլոր իմաստներով հանդերձ:

Իմաստային տարբերակումներն այնքան խորն են որոշ բայերի մեջ, որ առաջանում են ինքնուրույն, անկախ իմաստներ՝ կազմելով համանունների շարք: Դրանց չի կարելի մտցնել կրկնասեռ բայերի մեջ, քանի որ տարբեր իմաստ ունեցող նույնանուն բայերը ունեն իրենց տարբեր սեռերը: Համանունների շարք են կազմում այսպիսի բայեր՝ *բռնել, դակել, թորել, ժրել, լուծել, խփել, կարոտել, կոճկել, հեղել, հոսել, հոտել, մեկնել, միտել*⁵ և այլն:

Օրինակ՝ «Ուղքերը մի քիչ *մեկնեց* և ձեռքով շրջազգեստի փեշերը հավաքեց» (ԱԲ, 109): «Հորաքույրս ձմռանը *մեկնեց* Ռուսաստան»: «Ուսուցիչը դժվարությամբ *մեկնեց* խրթին շարադրանքը»: Ընդգծված բայերը իրենց *երկարել, ուղևորվել, բացատրել* իմաստային հեռացումներով չեն կարող կազմել կրկնասեռություն:

Այսպիսով, կրկնասեռ կարելի է համարել այն բայերը, որոնց իմաստային նրբերանգները մնում են տվյալ բայի իմաստային ոլորտում: Կրկնասեռ բայերը տարբերակված սեռային կշռույթով նույն բնույթը չունեն. որոշ բայերի մեջ գերակշռում է չեզոք սեռի իմաստը, մի այլ խմբում ընդգծված են ներգործական սեռի հատկանիշները, մի երրորդ խումբ բայերի մեջ հավասարազոր են այդ երկու սեռերի իմաստները:

Անձրևել, աշխատել, ապաստանել, բանաստեղծել, գահավիժել, դանդաղել, դարանել, դժգունել, դողացնել, երկատել, զբոսնել, զրուցել, ընթրել, խաղալ, խորվել, կաթել, մաղել, մոմոալ, ոռնալ, չարախոսել, պարապել, տազնապել, տարակուսել, տեղալ, ցատկել, փայլատակել, փչել և այլ բայեր իրենց հիմնական կիրառությամբ չեզոք սեռի են, բայց կարող են ուղիղ խնդիր վերցնել և ձեռք բերել ներգործական սեռի իմաստ: Գեղարվեստական գրականությունից բերենք այս երկրորդ կիրառության օրինակներ: «Դժվար *բարձրացավ* այդ կարճ *զատիվերը*» (ՀՄ, 22): «Ժատարարը բարձրացրեց գլխից վեր ու *շողջ* ու *խշշոց մաղեց*» (ՀՄ, 11): «Սոնան ուշքի եկավ, ասես կտրվեց մտքերից ու *փչեց փուքսը*» (ՀՄ, 20): «Հետո *հայհոյանք մրթմրթացինք*» (ՀՄ, 386): «Մարգագետինները *ծխում էին* դաղձի բույրը» (ԱԲ, 150): «Սփյուռքի հայերը *եղեռնը* ավելի հիվանդագին են *ապրում*» (Գթ, 3): «Ինչո՞ւ *կույաս* կուց - կուց *արուն*» (ՀԹ, 43):

Իսկ *արյունել, արցունքոտել, բռնել, բուրել, դյուրել, երևակայել, եփել, թարթել, թեքել, ժայթքել, խարսխել, խորհել, խփել, ծակել, կանխել, կեղծել, կեղտոտել, կոնծել, մանել, մարել, շփել, պատռել, պնդել, սերել, սկսել, ցողել* և այլ բայեր, իրենց հիմնական կիրառությամբ լինելով ներգործական սեռի, կարող են մինևնույն ժամանակ գործածվել չեզոք սեռի իմաստով: «Մենք կարծում ենք՝ տղերքը գնում ու հավիտյան էդպես էլ *չեն հիշում*. բայց, ուրեմն, *չեն մոռանում*, նստում իրենց երեխեքին պատմում են» (ՀՄ, 265): «Ժամերով կարող եք նայել, թե ինչպես է *զարկում* փորի մաշկը» (ԱԲ, 28): «*Լսեցին, տեսան*, բայց ծպտուն չհանեցին» (ԱԲ, 98): «Ես ուզում էի, որ նա էլ *կանչեր*» (ԱԲ, 123):

Ժամանակակից հայոց լեզվում կան բայեր, որոնցում չեն գերակշռում ո՛չ ներգործական և ո՛չ էլ չեզոք սեռի հատկանիշները. դրանք հավասարազոր են իրենց

⁵ Բառարանային տվյալները բերվում են ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (Եր., 1976):

կիրառությանը: Այդպիսի բայերից են՝ *արածել, բարբաջել, երգել, երկնել, ըմպել, խոսել, խորհրդածել, կարդալ, նախագգալ, նվագել, շնչել, շնչալ, պարզել, սուլել, ցնկնել, ուսանել, փսխել* և այլն: «Նախիրը փնչոցով *արածում էր* համեղ *խոտը*» (ԱԲ, 57): «Նախիրը փնչոցով *արածում էր*»: «Նրանք *նվագում են մանդոլին, կիթառ, նրանք երգում են* ուսերեն, *երգում են* իրենց սերը» (ԱԲ, 180): «Արյունուշտ ոճիրներով ահավոր *Մահ են շնչում* լեռներն ի վեր այլոր» (ՀԹ, 50): «Երեկվանից հիվանդն արդեն հանգիստ *էր շնչում*»:

Կա բայերի մի խումբ, որի կրկնաստեղծությունը ևս կապված է բայիմաստի հետ: Դրանք այն բայերն են, որոնց ներգործական սեռի կիրառությունը համապատասխանում է բուն բայաձևին, իսկ չեզոք սեռի նշանակությամբ գործածվելիս, ճիշտ է, բայը որևէ փոփոխության չի ենթարկվում, բայց ունի *վ* - ով ձևի իմաստ: Այդպիսի բայերից են՝ *այլակերպել, բախել, գունաթափել, գուլալել, ընկղմել, ընկնել, թավալել, թեքել, խոժոռել, խոնարհել, խոտորել, ծավալել, հաջողել, ձախողել, մաշել, մրոտել, միաբանել, մոլորել, պատռել, պղտորել, պարզել, սասանել, սերել, սկսել, տեղավորել, տոչորել, փլուզել, փոշոռել* և այլն:

Օրինակ՝ Էդ. Աղայանը *թավալել* բայի համար տալիս է հետևյալ բացատրությունը. «գլորելով շարժել» իմաստով այս բայը ներգործական է, իսկ «թավալվել» իմաստով՝ չեզոք: *Մրոտել* բայը «մուր քսել, մրով կեղտոտել» իմաստներով ներգործական սեռի նշանակություն ունի, իսկ «մրով կեղտոտվել» իմաստով՝ չեզոք սեռի: *Սերել* բայը «սերունդ արտադրել, ծնել» իմաստով ունի ներգործական սեռի կիրառություն, իսկ «ծնվել» իմաստով՝ չեզոք սեռի: Կրկնաստեղծության մասն արտահայտություններ տեսնում ենք հետևյալ նախադասություններում: «Երբ լուսո դեմ կրակը *հանդարտեց* (հանդարտվեց), խանձված ընկած էին Մանասի կինը, երեխան, կազակը» (ԱԲ, 101): «Կովկասի ամպած երկինքը *պարզեց* (պարզվեց)» (ՀԹ, 25): «Ծամր չոմբախը, գլուխը մեխած, Օճորքում դրած *պիտի մրոտի* (պիտի մրոտվի)» (ՀԹ, 188):

Մրանք, գուցե, շատ ավելի անհատական ոճային առանձնահատկություն ունեն, բնորոշ են տվյալ գրողի լեզվատճին: Նույն կերպ կենդանի խոսքում և գեղարվեստական գրականության մեջ կարող ենք հանդիպել բայերի այնպիսի իմաստային կիրառությունների, երբ խոսքին որոշակի հուզականություն, պատկերավորություն տալու նպատակով գործողությունը ստանում է փոխաբերական արժեք, որը նոր սեռային հատկանիշ է առաջացնում: Ա. Աբրահամյանը այդպիսի կիրառություններն անվանում է «ժամանակավոր - փոխաբերական նշանակություն» և գրում, թե «այդպիսի կիրառությամբ միայն բնագրային տվյալ պայմաններում բային ժամանակավորապես վերագրվում է քերականական-սեռային նոր հատկանիշ, որպիսին չունի տվյալ բայն ընդհանրապես, որպես բառական միավոր»⁶:

Անկախ գործածության մասնակի բնույթից, սեռային երկփեղկումը հիմք է տալիս այս բայերին ևս բնորոշ համարել կրկնաստեղծությունը: Այսպես. *խշշալ, շողարձակել, դողանջել* և նման մի շարք բայեր իրենց հիմնական գործածությամբ չեզոք են, բայց հետևյալ փոխաբերական կիրառություններում ձեռք են բերել ներգործական սեռի իմաստ: «Անտառն իր *թախիծն էր խշշում*»: «Նրա աչքերը *շողարձակում էին* անհուն *երջանկություն*»: «Եկեղեցու զանգերը *սարսուռ են դողանջում*»:

Ա. Աբրահամյանը նշում է, որ այս տիպի բայերը չենք կարող դնել նույն գծի վրա, ինչ «վարել հողը», «ջարդել սեղանը» և նման կապակցություններ: Այսինքն՝ ըստ նրա այս բայերի ներգործական սեռի հատկանիշ ունենալը ժամանակավոր է, և «միանգամայն հասկանալի է, որ ժամանակակից հայերենի բառարանում այս

⁶ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 673:

կարգի բայերը որպես բառական միավորներ ներկայացնելիս նրանց իսկական՝ չեզոք սեռին գուգահեռ չի կարելի նշել նաև ներգործական սեռը, քանի որ վերջինս չի մտնում նրանց բառական - քերականական նշանակության շրջանակի մեջ⁷:

Իսկ էդ. Աղայանը «Արդի հայերենի բացատրական բառարանում» նման չեզոք սեռի բայերի համար ներգործական սեռը նշում է փոխաբերական կիրառությանը: Այսինքն՝ նա այս բայերի փոխաբերական կիրառությունը՝ որպես ներգործական սեռի արտահայտություն, չի համարում ժամանակավոր երևույթ: Օրինակ՝

Հրաբխել - չք. «հրաբուխ առաջացնել», նք. փխբ. «հրաբխի պես ծայթթել»:

Առավոտել - չք. «առավոտ լինել, լուսավորել», նք. փխբ. «առավոտ բերել»:

Վերջում կրկին հիշենք, որ լեզուն անընդհատ զարգացող պատմական երևույթ է, և դրա շնորհիվ ժամանակակից հայերենում բայի հին իմաստը կարող է անհետանալ, ու առաջանալ նորը կամ արտահայտվել իմաստային տարբերակներից մի քանիսի մթագնումով և մյուսների պահպանումով: Այդպիսի փոփոխությունները միշտ չէ, որ առաջ են բերում սեռային տարբերակներ: Եթե իմաստային նման փոփոխությունները առաջացնում են անցման կամ սահմանափակման հատկանիշներ, ապա առկա են նաև քերականական փոփոխություններ: Հայոց լեզվի հին և նոր շրջանի շատ բայերի մեջ տեղի են ունեցել սեռային անցումներ կամ «սեռային տեղաշարժեր»: Դրանք կատարվել են պատմական զարգացման ընթացքում լեզվի մի որակից մի այլ որակի անցնելիս:

Նահանջել, սատակել, կանգնել, բարսխել, գաղթել, գարշել, դալարել, ծառայել, սահել, փայլել և այլ բայեր ժամանակակից հայերենում ունեն չեզոք սեռի նշանակություն, իսկ գրաբարում նրանք ունեցել են ներգործական սեռի կիրառություն: Ասենք՝ *նահանջել* բայը գրաբարում ունեցել է «առաջ մղել, դրդել» ներգործական իմաստները, իսկ ժամանակակից հայերենում՝ «ետ կանգնել, տեղի տալ» չեզոք նշանակությունը: *Բարսխել* բայը գրաբարում «բախել, միմյանց խփել» իմաստներով ներգործական է եղել: *Գաղթել* բայը այժմ ևս չեզոք սեռի է, իսկ գրաբարում այն «վտարել, տեղահան անել» իմաստներով նաև ներգործական կիրառություն է ունեցել:

Կարող է տեղի ունենալ նաև հակառակ երևույթը, երբ գրաբարյան չեզոք սեռի բայը իմաստի տեղաշարժերով արդի հայերենում գործածվի ներգործական նշանակությամբ:

Օրինակ՝ *դյութել, երեսել, կանխել* և այլ բայեր ժամանակակից հայոց լեզվում ներգործական սեռի են, իսկ գրաբարում գուգահեռաբար ունեցել են նաև չեզոք սեռի գործածություն: *Կանխել* բայը չեզոք սեռի կիրառություն է ունեցել «առավոտյան շուտ վեր կենալ, շտապել, արագ գնալ» իմաստներով: Պետք է նշել, որ բայերի այսպիսի իմաստային տարբերակումները ժամանակի ընթացքում կարող են ավելանալ կամ ընդհակառակը՝ նվազել:

Այսպիսով, կրկնասեռությունը, անկախ այդ երևույթի ընդգրկումների ճշգրտությունից, հայերենի բային բնորոշ քերականական կարգ է. բայն այդ դեպքում հանդես է բերում ոչ թե մեկ, այլ երկու սեռերի հատկանիշներ՝ առանց որևէ ձևային փոփոխության: Ընդհանրական կիրառությունների կողքին նկատվող մասնակի գործածությունները (ձևային փոփոխության չենթարկված, բայց *վ* -ով ձևի իմաստ ունեցողները, փոխաբերական - պատկերավոր կիրառությունները) պետք է համարել կրկնասեռություն: Ահա թե ինչու իմաստների զգալի հեռացումով հատկանշվող համանուն կամ նույնանուն բայերը չի կարելի համարել կրկնասեռ:

⁷ Ա. Աբրահամյան, ԱԶՎ. աշխ., էջ 678:

Կրկնասեռ բայերի տարբեր դրսևորումներ ակատելով՝ պետք է շեշտել, որ բուն կրկնասեռությունն արտահայտվում է ներգործական և չեզոք սեռերի միջև. դա իմաստային կրկնասեռությունն է: Ընդ որում, երկու սեռային կիրառություն ունեցող բայերի մի խմբի մեջ կարող է գերիշխել չեզոք սեռը, մյուսների մեջ՝ ներգործականը, մի երրորդ խմբում էլ դրանք կարող են հավասարաչափ լինել: Բոլոր դեպքերում իմաստային նրբերանգները պետք է մնան տվյալ բայի իմաստային ոլորտում:

Համառոտագրություն

- ԱԲ** - Ա. Բակունց, Երկեր, Եր., 1986:
- ԳԹ** - Գրական թերթ, թիվ 26, 2001:
- ՀԹ** - Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978:
- ՀՄ** - Հր. Մաթևոսյան, Տերը, Եր., 1983:
- Չ** - Ե. Չարենց, Հատընտիր, Եր., 1987:

Т. В. САФАРЯН - Семантические двувидовые глаголы в современном армянском языке. - Семантические двувидовые глаголы наблюдаются среди глаголов действительного и нейтрального залогов, поскольку глаголы эти, независимо от синтаксического употребления и без какого-либо изменения по форме, проявляют значения двух залогов. Многие приведенные словарные и литературные примеры подтверждают, что в одной группе глаголов, употребляющихся в двух залогах, может доминировать нейтральный залог, в другой - действительный, в третьей группе они могут быть равноценны. Двувидовые глаголы - историческое явление и в процессе развития языка претерпели изменения.